ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

I SSN 1829-2763

8 նոյեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

159
(2639)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 129



Հաճախ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ասված ստերը բացահայտում են հենց իր թիմակիցները կամ անկախ պաշտոնյաները: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչպես մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանի կողմից բացահայտվեց Փաշինյանի սուտը: Մասնավորապես, խոսքը Արցախյան 44-օրյա պատերազմի հետեւանքով անհետ կորած համարվող քաղաքացիների իրական թվի մասին է: Այսպես, 2021թ. օգոստոսի 26-ին Նիկոլ Փաշինյանն ԱԺ-ում հայտարարել էր, որ պատերազմի հետեւանքով 243 զինծառայողի գտնվելու վայրն անհայտ է, դրանից վեց ամիս անց՝ 2022թ փետրվարի 9-ին, Փաշինյանը կրկին ԱԺ-ում հրապարակեց նոր տվյալներ՝ նշելով, որ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանն ունի 217 անհետ կորած: Իսկ, ահա, ՄԻՊ Քրիստինե Գրիգորյանը, 2022 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացնելով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 2022թ. օգոստոսին ներկայացրած տվյալները, հայտնել է, որ 2020թ. 44-օրյա պատերազմի հետեւանքով 303 անձ Հայաստանից դեռեւս անհայտ կորած է համարվում: Սա եւս մեկ անգամ փաստում է, որ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը թաքցնում է իրական տվյալները, իսկ անձամբ վարչապետը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Երեկ խորհրդարանում ավարտվեցին 2023 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումները: Այս ամբողջ օրերի ընթացքում, երբ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները խորհրդարանում էին, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներն այնքան էլ ակտիվ չէին, եւ մատների վրա կարող ենք հաշվել այն պատգամավորներին, որոնք մասնակցել են բյուջեի քննարկումներին, ակտիվ եղել եւ հարցեր ուղղել: Թերեւս կարելի է մատնանշել ՔՊ-ական պատգամավորներ Հովիկ Աղազարյանին եւ Սերգեյ Բագրատյանին, որոնք ավանդաբար ակտիվ էին եւ գրեթե բոլոր զեկուցողներին հարցեր էին ուղղում: Երեկ, օրինակ, խորհրդարանում տեղի ունեցավ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի եւ Ֆինանսավարկային ու բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովների համատեղ նիստ: Խորհրդարանում երեկ ՀՀ մարզպետներն էին, որոնք հերթով ներկայացրին բյուջեի նախագծերը, սակայն ավանդական ակտիվությունն առկա չէր, եւ մարզպետներից շատերին անգամ հարց տվող չկար: Ավելին՝ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը եւ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանն առհասարակ նիստին չէին ներկայացել, եւ հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանի մտքով էլ չանցավ հետաքրքրվել, թե որն է նրանց՝ խորհրդարան չգալու պատճառը: Մինչդեռ ընդդիմադիր եղած ժամանակ հենց Նիկոլ Փաշինյանն էր քննադատում Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանին՝ ասելով, թե նա ավելի կարեւոր գործեր ուներ, քան խորհրդարան գալը: Որպես համեմատություն՝ ընդգծենք՝ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը երեկվանից արձակուրդում է, սակայն մասնակցում էր բյուջեի քննարկմանը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը փորձում է հեղինակավոր դատավորների հետ հարաբերությունները կարգավորել ու, դեռ ավելին, նրանցից որոշների օգնությանն է դիմել: Քանի որ նախատեսված է հանդիպումների շարք ՀՀ բոլոր դատարանների դատավորների հետ, ԲԴԽ նախագահը մինչ այդ՝ պալատ-պալատ հանդիպումները դիմել է հեղինակավոր դատավորներին, որպեսզի նրանք կարգավորեն խնդիրը, եւ իր հետ հանդիպման ժամանակ դատավորները չհարձակվեն իր վրա, չճնշեն: Արդյունքում մի քանի դատավորներ ներքին կարգով իրավիճակը հարթել են, եւ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի քրեական ոլորտը քննող եւ ՀՀ վերաքննիչ դատարանի դատավորների հետ հանդիպումը անցել է հանդարտ մթնոլորտում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Կարեն Անդրեասյանի հանդիպումներից նեղսրտած են մնացել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորները: Բանն այն է, որ Վճռաբեկի դատավորների հետ հանդիպմանը Անդրեասյանը դրական գնահատական է տվել քրեական պալատի գործունեությանը միգուցե այն պատճառով, որ արդարացնում են քաղաքական իշխանության հույսերը, իսկ, ահա, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորների հետ հանդիպմանը ԲԴԽ նորանշանակ նախագահը «հաթաթա» է տվել եւ ակնարկել՝ կոռուպցիոն դրսեւորումներ կան, որոնցով պետք է զբաղվել:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանը, պարզվում է, քրեական ենթամշակույթ հարողների հետ բավականին սերտ կապերի մեջ է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արվեստի ներկայացուցիչ պատգամավորը (նկարիչ է), մշակույթին զուգահեռ, նաեւ քրեական ենթամշակույթով է տարված ու թե՛ գործադիրում, թե՛ օրենսդիրում ուղիղ կապ է ստեղծում, ապահովում կապը քրեական աշխարհի ներկայացուցիչների եւ օրվա իշխանությունների միջեւ: Մեզ հայտնի դարձավ, որ օրերս՝ Դանիելյանի հոր մահվան տարելիցի արարողությանը, ի թիվս մի շարք պաշտոնյաների ու տեղացի ուժայինների (Սյունիքի մարզպետն, ի դեպ, ներկա չի եղել), մասնակցելիս է եղել նաեւ Նորտուսցի Ալիկ անունով հայտնի Ալիկ Բանդուրյանը: Տեղեկության ու քրեական աշխարհի ներկայացուցիչների հետ ունեցած կապի մասին մեկնաբանություն ստանալու համար նաեւ պատգամավորի հետ կապ հաստատեցինք: Նա, ըստ երեւույթին, չհերքեց մեր ունեցած տեղեկությունը՝ ասելով. «Շատ մարդ է եկել հորս մեկ տարվա արարողությանը: Մնացածը չեմ մեկնաբանում»: Արվեստագետ պատգամավորը, փաստորեն, ոչ միայն լավ է նկարում, այլ նաեւ քրեական հեղինակությունների հետ է «տալիս-առնում», գուցե հարցեր փորձում լուծել: Եվ դա՝ այն դեպքում, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոստանում էր, թե քրեական ենթամշակույթի դեմ է պայքարելու, իսկ Սյունիքում 2018-ից՝ իշխանափոխությունից հետո, մարզպետ էր նշանակում նախկին փոխոստիկանապետ Հունան Պողոսյանին, որ մարզում «քրեական տարրերի ողնաշարը կոտրի»: Իհարկե, վերջինս ոչ թե «կրիմինալի» դեմն առավ, այլ, սեփական դիմումի համաձայն, ազատվեց զբաղեցրած պաշտոնից: Փաշինյանի խոսքերը, փաստորեն, հատվածական են գործում, ու իշխանություններն այս հարցում եւս իրենց սրտի քրեական հեղինակություններն ունեն. մեկի նկատմամբ իրավական գործընթաց են սկսում, մյուսի հետ՝ գուցե նույն սեղանի շուրջը նստում:

ՊԵՏՔ Է ՏԱՐԱՆՋԱՏԵՆՔ

# ԱՆՆՇԱՆ ԴՐԱԿԱՆ ՇԱՐԺ ԿԱ

**Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանն ասում է, որ իրարից պետք է տարանջատել Հայաստան-Ադրբեջան հարաբերություններն ու Արցախի ինքնորոշման հիմնախնդիրը: Ըստ նրա՝ պետք չէ կատեգորիկ լինել ու պահանջել, որ «խաղաղության պայմանագրով» պետք է լուծվի նաեւ Արցախի կարգավիճակի հարցը: «Երկու տարբեր հարցերը տարանջատել է պետք մեկը մյուսից, ինչը բարեհաջող արվում է»,- նշում է նա:**



-Իշխանությունը հակված է հայկական տարբերակին, սակայն ոմանք մեզ մեղադրում են չափից ավելի շատ արեւմտամետ լինելու մեջ, մյուսները՝ ռուսամետ լինելու մեջ, եւ այս ամենը ապացույցն է այն ամենի, որ մենք վարում ենք արտաքին եւ հավասարակշռված քաղաքականություն: Յուրաքանչյուր պետության հետ մենք մեր հարաբերությունները կառուցում ենք փոխադարձ շահերի հիման վրա: Ինչ վերաբերում է խաղաղության պայմանագրին, ես մտավախություն ունեմ, որ դա չի էլ կնքվելու մոտ ապագայում, սակայն մյուս կողմից էլ թվում է, թե դա հնարավոր է: Եթե դա Թբիլիսիում է լինելու, թող լինի Թբիլիսիում:

**-Մոտավոր ի՞նչ ժամկետներ եք նախատեսում:**

-Ես դա կապում էի սահմանների եւ սահմանազատման խնդիրների հետ եւ, ըստ այդմ, կարծում էի, որ պայմանագրի կնքումը կարող էր ձգձգվել, քանի որ կողմերը գալիս են համաձայնության, որ իրենց համար հիմնային է 1991 թվականին Ալմաթայում կնքված պայմանագիրը, որով բոլորը Խորհրդային Միությունում ճանաչում են միմյանց սահմանները, եւ այս ամենը բերում է նրան, որ կարող է հիմք հանդիսանալ, որ պայմանագիրը շուտ կնքվի:

**-Նիկոլ Փաշինյանն ասում է, որ կողմ է ռուսական տարբերակին, որը որ Արցախի հարցն անժամկետ հարցականի տակ թողնելն է, բայց չի մերժում արեւմտյան տարբերակը, ավելին՝ Հայաստանը համաձայն է Ադրբեջանի կողմից առաջարկվող 5 կետերին եւ, համենայնդեպս, չի առարկում: Արդյունքում ստացվում է, որ Հայաստանը բոլոր տեսակի առաջարկները ընդունում է, սակայն վերջնական որոշում չկա, թե ինչ է լինում, եւ որ ճանապարհով ենք գնում:**

-«Հայաստանը բոլոր տեսակի առաջարկներն ընդունում է». այս նախադասությունը ես մի քիչ կփոխեի այլ կերպ՝ Հայաստանը ընդունում է բոլոր տեսակի առաջարկությունները, որոնք հենված են Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների ճշգրտման եւ, մյուս կողմից, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման հիմքերի վրա: Այս հիմքի վրա եկող առաջարկությունները թե որտեղից են, կարեւոր չէ, դրանք մեզ համար երկրորդական են. կարեւոր է, որ մենք այդ հիմքի վրա պատրաստ ենք շարունակել բանակցությունները եւ հասնել նպատակակետին:

**-Պարո՛ն Աղազարյան, ինքներդ ո՞ր տարբերակին եք հակված:**

-Նախ՝ ես միանշանակ կողմ եմ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների տարանջատմանը Արցախի Հանրապետության ինքնորոշման հարցից, իսկ ինչ վերաբերում է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման խնդրին, դա շատ բարդ հարց է, եւ, հետեւաբար, ես չեմ կարող պատասխանել այդ հարցին:

**-Այսինքն՝ Դուք կո՞ղմ եք, որ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները տարանջատեն Արցախի Հանրապետության ինքնորոշման հարցից:**

-Այո, տարանջատում ենք Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները, որը արվում է բարեհաջող:

**-Այսինքն՝ դրական քայլեր տեսնո՞ւմ եք երկու երկրների հարաբերությունների մեջ, եթե Արցախի ինքնորոշման հարցը դնում ենք մի կողմ:**

-Շատ թույլ, կարելի է ասել՝ աննշան, որովհետեւ Ադրբեջանն էլ պետք է հասկանա, որ չի կարող հավերժ գտնվել պատերազմական իրավիճակի մեջ: Մենք չենք կարող անտեր թողնել մեր ժողովրդի մի հատվածին եւ, հետեւաբար, պետք է այդ ճանապարհի վրա ձգտենք լուծումների, եւ հաճախակիանան ուղիղ շփումներն Ադրբեջանի հետ, որը օգտակար կլինի երկու երկրների եւ տարածաշրջանի զարգացման համար: Այդ ճանապարհին կլուծվի Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցը. հիմա թե ինչ մակարդակով, դա արդեն ժամանակի հարց է:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ

# ՎՃԱՐՈՒՄԸ ՃԻՇՏ ՉԻ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ

**ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Նախորդող ժամանակահատվածում ահազանգեր էի ստանում այն մասին, որ ՀՀ զինծառայողների եւ պետական մի շարք մարմինների աշխատակիցների ամենամյա արձակուրդի համար վճարումը ճիշտ չի հաշվարկվում: Մասնավորապես, բարձրաձայնվում էր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա պրակտիկան:**



Այս առիթով խորհրդարանում կազմակերպեցի աշխատանքային քննարկում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչների, իրավապաշտպանների եւ ՀՀ պահեստազորի զինծառայողների նախաձեռնության անդամների միջեւ:

Քննարկման թեման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին եւ 158-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված իրավակարգավորումների կիրառման շուրջ առաջացող հարցերն էին եւ քննարկման արդյունքում վեր հանված խնդիրների լուծման ուղիների հստակեցումը:

Է. Հովհաննիսյանի օրինակով ծավալեցինք շահագրգիռ քննարկում, արձանագրեցինք, որ հարցը դատական կարգով եւս բողոքարկվել է, ու պայմանավորվեցինք համապատասխան դատական ակտի կայացումից հետո հստակեցնել հետագա քայլերը:

Զինծառայողների իրավունքներին առնչվող հարցերը ինձ համար խիստ արդիական են»:

## ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

«Մեզ մոտ կրակոցների ձայներ չեն լսվել, հնարավոր է, որ դիրքերի ուղղությամբ լինեն, բայց գյուղում չենք լսել»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասացին Գեղարքունիքի մարզի Կուտական եւ Կութ վարչական շրջանների ղեկավարներ Գրիգորի Ավագյանն ու Մակիչ Թովմասյանը:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Հայկական կողմը կորուստներ չունի:

Ժամը 08:00-ի դրությամբ իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է:

## ԳՆՈՒՄ ՈՒ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Հայաստանում, այս տարվա երրորդ եռամսյակի տվյալներով, գրանցվել է անշարժ գույքի 53 278 գործարք: Ընդհանուր առմամբ, իրականացված գործարքները, այս տարվա երրորդ եռամսյակի կտրվածքով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելի են 2,7 տոկոսով: Հիմնականում գործարքները վերաբերել են օտարմանը. առքուվաճառքի թվերը նվազել են 15 տոկոսով:

ArշLur.aշ-ը տեղեկացավ, որ ամենաշատ գործարքները կատարվել են Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, իսկ ամենաքիչը՝Նուբարաշենում: Հանրապետության՝ մասշտաբով ամենաքիչ գործարքները եղել են Վայոց ձորի մարզում:

Անշարժ գույքի քառակուսի մետրի գները շարունակում են աճել: Այն այժմ ունի հետեւյալ տեսքը՝

- o Կենտրոն-աճել է 17,1 տոկոսով, կազմել՝746 000 դրամ,
- o Արաբկիր-աճել է 14,7 տոկոսով, կազմել՝530 500 դրամ,
- o Քանաքեռ-Զեյթուն-աճել է 17,6 տոկոսով, կազմել՝387 400 դրամ,
- o Նոր-Նորք-աճել է 8,5 տոկոսով, կազմել՝331 000 դրամ,
- o Էրեբունի-աճել է 17,3 տոկոսով, կազմել՝343 800 դրամ,
- o Շենգավիթ-աճել է 10,1 տոկոսով, կազմել՝341 400 դրամ,
- o Դավթաշեն-աճել է 19,6 տոկոսով, կազմել՝391 000 դրամ,
- o Աջափնյակ-աճել է 14,2 տոկոսով, կազմել՝362 600 դրամ,
- o Մալաթիա-Սեբաստիա-աճել է 15 տոկոսով, կազմել՝339 000 դրամ,
- o Ավան-աճել է 13,4 տոկոսով, կազմել՝337 700 դրամ,
- o Նուբարաշեն-աճել է 13,4 տոկոսով, կազմել՝ 205 400 դրամ:

Բացի վաճառքից եւ գնումից, վարձակալության գործարքների թիվը եւս ավելացել է, եւ կրկին ամենաշատ գործարքները կատարվել են Երեւանում, հիմնականում՝ Կենտրոնում, Ավանում ու Շենգավիթում:

## ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Armlur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել Էրեբունիում՝ ավտոտնակում ինքնասպան եղած 22-ամյա երիտասարդի՝ Նարեկ Իսրայելյանի՝ Էրեբունիում հայտնի թաղային հեղինակություն համարվող Պիստ Արմենի՝ Արմեն Իսրայելյանի որդու դեպքով:

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 4-ին ողբերգական դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 11:40-ի սահմաններում շտապօգնության 4-րդ ենթակայանից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Ավանեսովի փողոցի տներից մեկը, որտեղ ավտոտնակում հայտնաբերել է երիտասարդ տղայի դի. գրել էր shamshyan.com-ը:

Ոստիկաններն ու քննիչները նշված տան ավտոտնակի էլեկտրական դարպասի ամրակներից մալուխով կախված վիճակում հայտնաբերել են 22-ամյա Նարեկ Ի.-ի դին: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ՝ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Դեպքի փաստով Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ըստ նախնական տեղեկությունների՝ Նարեկ Ի.-ն ինքնասպանություն է գործել: Քննիչի որոշմամբ՝նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Էրեբունիում՝ ավտոտնակում ինքնասպան եղած 22-ամյա երիտասարդը՝ Նարեկ Իսրայելյանը, Էրեբունիում հայտնի թաղային հեղինակություն համարվող Պիստ Արմենի՝ Արմեն Իսրայելյանի որդին էր:

Պիստ Արմենը ՅՅ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի սանիկն է: Մեզ հայտնի դարձավ, որ որեւէ մեկը երիտասարդ տղային չի դրդել կամ հասցրել այդ քայլին: Նախաքննական մարմինն արդեն ունի տվյալներ, որ երիտասարդ տղան ունեցել է առողջական լուրջ խնդիրներ եւ այդ իրավիճակից ելնելով՝որոշել է վերջ տալ իր կյանքին:

## ՈՐՍԸ ՉԻ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ

Սեւանա լճում խեցգետին չկա: Այս մասին ահազանգում են մասնագետները՝նկատելով, որ Սեւանա լճում՝ջրային ավազաններում, կտրուկ նվազել են խեցգետնի պաշարները: Պատճառը, ըստ մասնագետների, խեցգետնի որսը սխալ կանոնակարգելն է: Ճիշտ է, որսի թույլտվություն տրվում է, բայց չի վերահսկվում, եւ որսի ծավալները գնալով ավելի ու ավելի են շատանում: Յայաստանի էկոնոմիկայի նախարարությունն առաջարկում է խեցգետին արտադրել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վահան Քերոբյանի ղեկավարած նախարարությունն առաջարկում է 2023-2025 թթ? հանրապետությունում հիմնել 9 խեցգետնաբուծական համալիրներ, 3-ական՝ փոքր, միջին, խոշոր: Ավելին, տնտեսավարողներին տրամադրվելու է փոխհատուցում՝ կատարված ներդրումների 50 տոկոսի չափով: Փոխհատուցվող ընդհանուր գումարը կազմելու է 819 մլն դրամ, ինչի համար անհրաժեշտ կլինի Յայաստանի 2023, 2024 եւ 2025 թվականների պետական բյուջեից տարեկան հատկացնել 273 մլն դրամ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

**ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը ծախսային մասով գալիք տարվա համար կհատկացվի 298,6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա հատկացումից 9 տոկոսով ավելի է: Այս գումարը կազմում է պետական բյուջեի 11,5 տոկոսը: Նախարարությունը հաջորդ տարի նախատեսում է իրականացնել 23 ծրագիր՝ 137 միջոցառումով: Տրանսպորտի ոլորտին նախատեսված է հատկացնել 115 մլրդ դրամ, ջրային ոլորտին՝ 49,6, էներգետիկ ոլորտին՝ 27, տարածքային կառավարման ոլորտին՝ 137,8 մլրդ դրամ: Այս մասին հայտնել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2023 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկումների ժամանակ:**



Նախարարը ներկայացրել է իրականացվելիք ծրագրերը:

«Տարածքային զարգացում» ծրագրի իրականացման համար կհատկացվի 99 մլրդ դրամ, որը նախորդ տարվա հատկացումից ավելի է 15,5 մլրդ դրամով: Մյուս խոշոր հատկացումը վերաբերում է սուբվենցիոն ծրագրերին: Գալիք տարում այս ծախսերին կհատկացվի 23 մլրդ դրամ. այս տարի հատկացվել է 18 մլրդ:

Սահմանամերձ համայնքներին աջակցելու նպատակով 2023 թ. կհատկացվի 973 մլն դրամ: Սահմանամերձի կարգավիճակ ունեն 23 համայնք եւ 82 բնակավայր:

«Երեւան քաղաքին սուբվենցիաների հատկացում» ծրագրով նախատեսված է տրամադրել 5,4 մլրդ դրամ:

«Քաղաքային զարգացում» ծրագրին կհատկացվի 23,4 մլրդ դրամ: Մասնավորապես, Երեւան քաղաքի համար ավտոբուսներ գնելու համար կտրամադրվի 11,3 մլրդ դրամ: Նախարարը հայտնել է, որ արդեն մոտենում է ավտոբուսների գնման եւ վճարման փուլը:

Գյումրիի համար նախատեսված է 700 մլն դրամ: Այս գումարի շրջանակում կիրականացվեն լուսավորության, ճանապարհաշինական աշխատանքներ:

2023թ. օտարվելու է 10 մլրդ դրամի չափով պետական գույք:

49,6 մլրդ դրամ նախատեսված է հատկացնել ջրային ոլորտին: 32,8 մլրդ կհատկացվի «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրին:

10,6 մլրդ դրամ հատկացվելու է Կապսի ջրամբարի շինարարությանը, 5,5 մլրդ՝ ոռոգման համակարգերի զարգացմանը եւ այլն:

«Ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի բարելավում» ծրագրին կտրամադրվի 15 մլրդ դրամ:

Երեւան քաղաքին հատկացումները գալիք տարում 6,2 մլրդ դրամով ավելի կլինեն:

2023թ. Երեւանի քաղաքապետարանին նախատեսվում է հատկացնել 42 մլրդ 316 մլն դրամ, որից խոշորը կրթական ծրագրերով պետության կողմից Երեւան համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորություններն են՝ 18 մլրդ դրամի շրջանակում: Այս մասին տեղեկացրել է Երեւանի քաղաքապետ Յրաչյա Սարգսյանը՝ ներկայացնելով 2023թ. բյուջետային հատկացումները:

Քաղաքապետի խոսքով՝ Երեւանի մետրոպոլիտենով ուղեւորափոխադրման ծառայությունների կազմակերպման համար 2023 թ. կհատկացվի մոտ 2 մլրդ 700 մլն դրամ:

2023 թ. Արշակունյաց-Իսակով ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 3 մլրդ դրամ:

Յրաչյա Սարգսյանը նաեւ նշել է, որ 2023 թ. բյուջետային հայտի մեծ մասնաբաժին է կազմում տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար նախատեսված գումարը: Ավտոբուսները Երեւանում կլինեն գալիք տարվա ամռանը: Յատկացումը կլինի 9 մլրդ դրամի շրջանակում:

«Ես վստահ եմ, որ 2023 թ. ընթացքում մենք 70 տոկոսի չափով կլուծենք տրանսպորտի խնդիրը: Տրանսպորտի խնդիրը միայն տրանսպորտային միջոցների ձեռքբերումը չէ, սակայն դա առաջնահերթ քայլերից մեկն է»,- ասել է քաղաքապետը:

2023թ. էներգախնայող միջոցառումների շրջանակում նախատեսվում է մանկապարտեզների վերանորոգում, որը կիրականացվի Եվրամիության տրամադրած շուրջ 2 մլրդ վարկով: Քաղաքապետի խոսքով՝ եկող տարի նախատեսվում է կնքել եւս մեկ վարկային համաձայնագիր, որով կվերանորոգվեն 6 պոլիկլինիկա եւ 16 մանկապարտեզ:

Երեւանի քաղաքապետը պատասխանել է նաեւ պատգամավորների հարցադրումներին:

Անդրադառնալով մանկապարտեզների գերծանրաբեռնվածությանը վերաբերող հարցին՝Յրաչյա Սարգսյանը տեղեկացրել է, որ Երեւանում կա 162 մանկապարտեզ, որից 24-ը կապիտալ վերանորոգման փուլում է: Այդ պատճառով 24 հաստատություն հաճախող երեխաները հնարավորություն չունեն մանկապարտեզ գնալու: Ըստ նրա՝ նախնական հաշվարկով՝ 2023 թ. 40 մանկապարտեզ կլինի վերանորոգման փուլում: Քաղաքապետը նշել է, որ կան նաեւ նորակառույց շենքերով համալրված հատվածներ, որտեղ մանկապարտեզներ չկան: Այս համատեքստում ընդգծվել է, որ 3 տարբեր վարչական շրջաններում նախատեսվում է նոր մանկապարտեզների կառուցում:

ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստին մասնակցել են նաեւ ՅՅ մարզպետները, որոնք ներկայացրել են 2023թ. բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները:

*ՆԱԻՐԱ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՆՈՐ ՊԵՏ

Երեւանի քաղաքապետարանի վերահսկողության վարչության պետ է նշանակվել Վահան Արսենյանը:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանում նոյեմբերի 7-ին մեկնարկած գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասաց քաղաքապետ Յրաչյա Սարգսյանը:

## 27-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Յանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը մեկնել է Եգիպտոսի Արաբական Յանրապետություն՝ մասնակցելու ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովին (COP27):

Շարմ էլ Շեյխում նախատեսված համաժողովի ընթացքում նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդես կգա ելույթով: Յամաժողովի շրջանակում Յանրապետության նախագահը նաեւ հանդիպումներ կունենա մի շարք երկրների առաջնորդների հետ:

Միջազգային համաժողովին այս տարի մասնակցում են շուրջ 120 երկրների առաջնորդներ, տարբեր երկրների մոտ 45 հազար պատվիրակներ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Ռուսաստանն Ադրբեջանին ու Յայաստանին կոչ է արել զերծ մնալ քայլերից, որոնք կարող են հանգեցնել լարվածության աճի:

Ինչպես հաղորդում է ՏԱՍՍ գործակալությունը, լրագրողների հետ զրույցում ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ Սոչիում կայացած եռակողմ հանդիպմանը շեշտադրվել է Յայաստանի եւ Ադրբեջանի՝ խնդիրները բացառապես քաղաքական-դիվանագիտական, խաղաղ ճանապարհով լուծելու մտադրությունը: «Դրա համար մենք կողմերին կոչ ենք անում զերծ մնալ վտանգավոր գործողություններից եւ քայլերից, որոնք կարող են լարվածության հանգեցնել շփման գծում»,- ասել է Պեսկովը՝ անդրադառնալով հայ-ադրբեջանական սահմանին հրադադարի խախտումների մասին հաղորդումներին:

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Յայաստանի Յանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով՝ Արամ Յարությունյանը նշանակվել է ՅՅ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության պետ՝ազատվելով ՅՅ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի (ՅԿԳ ավագ քննիչի) պաշտոնից:

ՆԱԽԱԳԻԾ

# ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԵՂԾՎԻ

**Ազգային անվտանգության ծառայությունը նախագիծ է ներկայացրել քննարկման, որով առաջարկում է ստեղծել հետախուզական գործունեություն իրականացնող առանձին մարմին (ծառայություն)՝ վարչապետին ենթակա մարմնի կարգավիճակով:**



Հիմնավորման մեջ նշվում է, թե ՀՀ կառավարության՝ 2021-2026 թթ. ծրագրով ամրագրված է արտաքին հետախուզական ծառայություն ունենալու հրամայականը: Միեւնույն ժամանակ նշվում է, որ Հայաստանն ունի նոր որակի հետախուզություն ունենալու եւ սեփական հետախուզական դպրոցը ձեւավորելու հրամայական՝ հետախուզական գործունեության անընդհատության եւ ոլորտի բարելավման ապահովման նպատակով: Հետախուզության առանձին կառույցի ստեղծման անհրաժեշտության մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ տարածաշրջանում միայն Հայաստանն է, որ առայժմ չունի առանձին հետախուզական ծառայություն:

Ընդ որում, ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է ծառայության պետը: Ծառայության պետն անմիջականորեն ենթակա եւ հաշվետու է վարչապետին:

Ծառայության ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետեւյալ խմբերի՝

1) ծառայության բարձրագույն պաշտոններ,
2) ծառայության գլխավոր պաշտոններ,
3) ծառայության ավագ պաշտոններ,
4) ծառայության միջին պաշտոններ,
5) ծառայության կրտսեր պաշտոններ:

Որպես առանձին կառույց՝ ՀՀ արտաքին հետախուզության ստեղծման անհրաժեշտությունը բխում է՝

- հետախուզական եւ հակահետախուզական բնույթի գործունեության արդյունավետության բարձրացման,
- դրանցում ֆունկցիոնալ տարանջատման սկզբունքի հետեւողական իրականացման,
- տեխնոլոգիական տեսանկյունից՝ բազմատեսակ, գործունեության էության տեսանկյունից՝ բազմաբնույթ հետախուզական հանրության բնականոն ստեղծման հրամայականներից:

Այն համահունչ է համաշխարհային փորձին՝ թե՛ աշխարհի առաջատար երկրների, թե՛ տարածաշրջանի երկրների, թե՛ մեր անմիջական հարեւանների օրինակով:

ՀՀ արտաքին հետախուզության ստեղծումը ոչ միայն կնպաստի ԱԱԾ գործառութային արդյունավետության բարձրացմանը՝ հնարավորություն ընձեռնելով կենտրոնանալ հակահետախուզության եւ ահաբեկչության դեմ պայքարի ուղղություններով, այլեւ հնարավորություն կընձեռի ավելի ճկուն ու համարժեք արձագանքել հարաճուն փոփոխվող աշխարհի ու տարածաշրջանի մարտահրավերներին:

Նախագծերի ընդունման դեպքում նախատեսվում է ունենալ ժամանակակից ենթակառուցվածքներով եւ նյութատեխնիկական ապահովածությամբ, Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գործընթացում ուրույն դերակատարում ունեցող, Հայաստանի Հանրապետության վարչապետին ենթակա մասնագիտացված արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող ծառայություն:

Նաեւ արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համակարգը բաղկացած է Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնից՝ Ծառայությունից՝ կենտրոնական եւ մարզային կառուցվածքային ստորաբաժանումներից, հատուկ նշանակության եւ այլ ստորաբաժանումներից, ինչպես նաեւ արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմիններից (պետական կառավարման համակարգի մարմիններում արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներից):

1.Արտաքին հետախուզական գործունեության նպատակներն են՝

1) վարչապետին քաղաքական, անվտանգային, տնտեսական, պաշտպանական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական եւ բնապահպանական բնագավառներում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը,

2) Հայաստանի Հանրապետության անվտանգության ոլորտի պետական քաղաքականության մշակման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, ինչպես նաեւ նույն քաղաքականության իրականացման ապահովումը,

3) Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովմանը, պաշտպանունակությանը, տնտեսական զարգացմանը, գիտատեխնիկական եւ ռազմաարդյունաբերական առաջընթացին աջակցումը,

4) արտաքին հետախուզական գործունեություն, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման խնդիրներ իրականացնող այլ մարմիններին արտաքին հետախուզական ոլորտի համապատասխան տեղեկատվությամբ ապահովումը:

2. Արտաքին հետախուզական գործունեությունը չի կարող իրականացվել սույն օրենքով չնախատեսված նպատակներին հասնելու համար:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԴԱՏԱՎՈՐԻ ՇՈՒՐՋ

# ԲԱՆԱՎԵՃ՝ ԲԴԽ ՆԻՍՏՈՒՄ

**Ինչպես արդեն հայտնել ենք, Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանի նկատմամբ վարույթը հարուցվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Դատավորին վերագրվում է դատավարական ժամկետի խախտում, որը, ըստ վարույթ հարուցող մարմնի, հանգեցրել է ինչպես դատավարական իրավունքի նորմի, այնպես էլ դատավորի վարքագծի կանոնի խախտման: Մասնավորապես, ըստ ներկայացված միջնորդության, դատական ակտն ուշացումով է կողմին տրամադրվել:**

ԲԴԽ-ում մեկնարկել է միջնորդության քննության նպատակով հրավիրված նիստը:

Մինչ միջնորդության ըստ էության քննությանն անցնելը Կարեն Անդրեասյանը հայտնեց ինքնաբացարկ հայտնելու մասին՝ նշելով, որ կարգապահական վարույթը հարուցվել է իր կողմից արդարադատության նախարար լինելու ընթացքում: ԲԴԽ-ն խորհրդակցական սենյակում որոշեց բավարարել միջնորդությունը:

Դատավորի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը միջնորդություն ներկայացրեց ԲԴԽ անդամ Երանուհի Թումանյանին բացարկ հայտնելու մասին՝ արձանագրելով, որ Թումանյանցը եղել է արդարադատության նախարարի տեղակալ, առնչություն ունեցել սույն վարույթի հարուցմանը: Նրա խոսքով՝ ադարադատության նախարարի տեղակալն ի պաշտոնե պետք է կիսի եւ պաշտպանի արդարադատության նախարարի դիրքորոշումները: Բացի այդ, Թումանյանցը տարիներ շարունակ աշխատել է Կարեն Անդրեասյանի հետ ՄԻՊ գրասենյակում, «AM» փաստաբանական գրասենյակում, ապա՝ նախարարի տեղակալի պաշտոնում, հիմա էլ Կարեն Անդրեասյանի հետ տեղափոխվել է ԲԴԽ, եւ այս «կայուն սերտաճությունը» նկատի ունենալով՝ Սիրանուշ Սահակյանն ընդգծեց՝ Թումանյանցը չի կարող անաչառ լինել իր նախկին ընկեր, գործընկեր, նախկին ղեկավար Անդրեասյանի վարույթի հետ:

ԲԴԽ-ն որոշեց մերժել միջնորդությունը՝ արձանագրելով, որ Թումանյանցն այդ ընթացքում չի առնչվել վարույթին: Դատավորի ներկայացուցիչը եւս մեկ բացարկի միջնորդություն ներկայացրեց, այս անգամ՝ ԲԴԽ երեք գիտնական անդամներին՝ Դավիթ Խաչատուրյանին, Վիգեն Քոչարյանին, Երանուհի Թումանյանցին՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ վերջիններս ԲԴԽ անդամ են ընտրվել ԱԺ-ի կողմից՝ իշխող քաղաքական ուժի կողմից, ընդդիմությունը չի մասնակցել քվեարկությանը, հաշվի չեն առնվել պրոֆեսիոնալ գործոնները:

Սահակյանը հավելեց, որ ԲԴԽ գիտնական-անդամների թափուր տեղերն առաջացել են տարբեր արատավոր գործընթացների պայմաններում: Ավելին, Սահակյանն ուշադրություն հրավիրեց ԲԴԽ անդամներ Անդրեասյանի եւ Թումանյանցի ընտրության հարցին՝նշելով, որ եթե ավելի հեղինակավոր գիտնական-անդամներ տեսնեին, գուցե այլ կերպ լիներ, բայց բազմաթիվ հեղինակավոր-գիտնականներից առաջադրվել է իրենց թիմի թեկնածությունը, վերջիններս քաղաքական պաշտոնից անմիջապես տեղափոխվում են ԲԴԽ:

Սահակյանի խոսքով՝ կախյալության աստիճանը մեծանում է, անկախության երաշխիքները գնալով ավելի են փոքրանում:

Արդարադատության նախարարի պաշտոնակատար Գրիգորի Մինասյանն էլ միջնորդությունը որակեց որպես քաղաքական հայտարարություն՝ նշելով, որ այն նման է «Հայաստան» դաշինքի վերջին հանրահավաքի հայտարարություններին:

Սիրանուշ Սահակյանը արձագանքեց այս ամենին՝ նշելով, որ նա «Հայաստան» դաշինքի հանրահավաքներ չի նայում:

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՔՆԱՀՐԿԻԶՎԱԾ ՏՂԱՄԱՐԴ



Armlur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել ՀՀ վարչապետի առանձնատան մոտ 47-ամյա տղամարդու ինքնահրկիզման դեպքից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները պարզել են, որ նա շատ պարտքեր է ունեցել, ավելին՝ այդ պարտքերի հետեւանքով նրա մեքենան հետախուզման մեջ է եղել. մեքենան հայտնաբերվել եւ առգրավվել է: Նրա կինը թողել հեռացել է նրանից, եւ նա տեւական ժամանակ պարբերաբար խմել է ու որոշել դիմել այդ քայլին:

Նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ 2022 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 23:25-ին, Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկից շտապօգնության խումբը 2-րդ, 3-րդ աստիճանի այրվածքներով բուժօգնության է տեղափոխել Ջրաշեն գյուղի 47-ամյա բնակչին:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել եւ վերցվել է պլաստմասե տարա, ինչպես նաեւ վերնազգեստ եւ կիսահրկիզված հագուստ: Նշանակվել են դատանյութագիտական, հրդեհատեխնիկական եւ մատնադրոշմային փորձաքննություններ:

Ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նույն օրը՝ժամը 21:15-ի սահմաններում, Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում՝ կառավարական կեցավայրի դարպասների դիմաց, 47-ամյա տղամարդն անձնական խնդիրների պատճառով ինքնահրկիզման եղանակով փորձել է ինքնասպան լինել:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԱՎՏՈՎԹԱՐ

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 21:25-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Չեխովի փողոցի եւ Բագրատունյաց պողոտայի խաչմերուկի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. կա տուժած:

Պարզվել է, որ բախվել են VAZ-2121 (վարորդ՝Գ. Ա.) եւ Toyota Prius (վարորդ՝ Է. Մ.) մակնիշների ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը VAZ-2121 մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր Մ. Ա.-ն (ծնված 1999 թ.) հոսպիտալացվել է «Աստղիկ» ԲԿ, որտեղ բժիշկները նրա առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները եւ փակել գազի բալոնների փականները:

*● Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 71 դեպք, որոնցից 14-ը՝նախկինում կատարված:*

ՈՂՈՎՈՒՐԴ

www.ArmLur.am



ՄԱՐԶ

## ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԹՆՈԼՈՐՏ

Դիլիջան համայնքի բնակիչները պատմում են, որ զարմացած են համայնքապետարանի աշխատասենյակներում տիրող իրավիճակից: Իրենց գործերով համայնքապետարանի շենք գնացածները պատմում են, որ աշխատանքային ժամերին համայնքապետարանի աշխատասենյակներից մեկում սուրճ են եփում, մյուսում՝ ճաշ, մեկ այլ սենյակում համայնքապետարանի աշխատող կինն իր մազերն է ֆենում: Բնակիչները պատմում են, որ ժամը 15-ից հետո դժվար է համայնքապետարանում պաշտոնյա «բռնեցնել», նրանք արդեն տուն գնացած են լինում: Դիլիջանի բնակիչներն ասացին, որ համայնքապետարանի աշխատակազմի որոշ աշխատողներ, անփորձ լինելով, տեղյակ չեն իրենց ոլորտին վերաբերող իրավական ակտերից, այդ պատճառով իրենց աշխատանքում դժվարություններ են ունենում: 2021 թվականի փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դիլիջան խոշորացված համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակեց իր եղբորորդի Սիփան Փաշինյանի ընկեր, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, Դիլիջան քոլեջն ավարտած, ՔՊ կուսակցության անդամ Դավիթ Սարգսյանին: Վերջինս 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ձեւավորված ավագանու կողմից ընտրվեց Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար:

## ՏԱՆԻՔԸ ՆՈՐՈԳՎԵԼ Է

Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Սարիգյուղի մշակույթի կենտրոնի հսկա շենքը տարիներ շարունակ կիսավեր վիճակում է: Այդ կենտրոնին ադրբեջանական ոչ մի արկ կամ գնդակ չի դիպել, սակայն շենքը տուժել է անտերությունից, հոգածության պակասից: 2009թ. դեկտեմբերից մինչեւ 2010թ. ապրիլ ամիսը Տավուշի մարզի սահմանագոտում ավելացել էր անասնագողությունների թիվը, այդ հանցագործությունների հետքը տանում էր դեպի հարեւան Ադրբեջան: Անասնագողությունների դեմ պայքարի նպատակով Սարիգյուղի մշակույթի տանը տեղակայվեց ՊՆ հատուկ նշանակության ջոկատը: Այդ ջոկատի անդամներն էլ մշակույթի կենտրոնի գույքը փչացրել են: Հատուկ նշանակության ջոկատի անդամները քանդել եւ որպես վառելիք են օգտագործել մշակույթի տան մանրահատակը, դռների մի մասը, դրանց եւ լուսամուտների չոր սյուները, փայտյա շրջանակները եւ այլն: Սարիգյուղ համայնքի ղեկավարը, գյուղի բնակիչները այդ զինծառայողների եւ համագյուղացիների ոտնձգություններից չեն պաշտպանել համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի կենտրոնի շենքը: Մշակույթի տան հսկա շենքը վերանորոգելու համար ֆինանսական մեծ միջոցներ են պահանջվում: Հարկ էր տեղումներից պաշտպանել շենքը, որպեսզի այն հետագայում ամբողջությամբ կամ մասամբ նորոգվի: Իջեւան խոշոր համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանի նախաձեռնությամբ՝ համայնքապետարանի կողմից այժմ նորոգվել է Սարգյուղի մշակույթի տան տանիքը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

*Տավուշ*

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

# ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել է «Հանրակրթական հիմնական ընդհանուր եւ այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձեւավորման ու գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման կարգը»:**



*Ուսումնական խմբակների ձեւավորումը*

Ուսումնական խմբակների անհրաժեշտությունը որոշվում է սովորողների առաջարկությամբ, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առաջնահերթություններով, դպրոցի զարգացման նպատակներով: Խմբակը կարող է վարել ուսուցիչը կամ համապատասխան որակավորում ունեցող մասնագետը:

Խմբակը ստեղծվում է սովորողների՝

-արտադասարանական ուսումնառության եւ ժամանցի կազմակերպման համար,

-նախասիրությունների, հետաքրքրության տարբեր ոլորտների (գիտություն, արվեստ, զբոսաշրջություն, հայրենագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ եւ այլն) վերաբերյալ ուսումնական ծրագրերի իրականացման համար,

-սոցիալականացման եւ ինքնուրույն կենսագործունեության համար,

- մասնագիտական կողմնորոշման համար:

Հաստատությունում խմբակները ձեւավորվում են՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ, մանկավարժական խորհրդի որոշմամբ կամ ծնողների առաջարկությամբ՝ տնօրենի հրամանով՝ պահպանելով կարգով սահմանված պահանջները: Լիազորված մարմնի որոշմամբ սահմանվում են առողջ ապրելակերպի խմբակն ու մասնագիտական կողմնորոշման ակումբը:

Խմբակի ծրագիրն անհրաժեշտ է մինչեւ հունիսի 15-ը ներկայացնել ԿԶՆԱԿ հիմնադրամ նոր ուսումնական տարում գործածելու նպատակով: Փորձագիտական դրական եզրակացության դեպքում խմբակի ծրագիրը ներկայացվում է ԿԳՄՍ նախարարություն՝ սահմանված կարգով գործածության երաշխավորելու համար:

Նախարարության կողմից հաստատված ծրագրերը հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են օգտագործել առանց լրացուցիչ հաստատման:

Կրթական որեւէ աստիճանում խմբակի իրականացման համար հատկացվող ժամաքանակը չի կարող գերազանցել շաբաթական 2 ժամը: Կրթական տարբեր աստիճաններում միաժամանակ կարող է իրականացվել նույն խմբակը:

Յուրաքանչյուր կրթական աստիճանում գործող ծրագիրը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Ծրագրի անվանումը չի կարող կրկնել ուսումնական պլանով նախատեսված որեւէ ուսումնական առարկայի անվանումը եւ ծրագրի բովանդակությունը:

*Ուսումնական խմբակների գործունեությունը*

Խմբակը տարիֆիկացվում է, եթե դրա ծրագիրը հաստատել է հաստատության տնօրենը, եւ առնվազն 8 սովորող խմբակում ընդգրկվելու ցանկություն է հայտնել: Սովորողները կարող են մասնակցել խմբակի աշխատանքներին իրենց ցանկությամբ եւ հրաժարվել դրան մասնակցելուց առանց հիմնավորման: Բացառություն կարող են կազմել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ սահմանված խմբակները: Հաստատության ընտրությամբ խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքները գնահատվում են ձեւավորող գնահատման մեթոդներով:

*Դպրոցներում ուսումնական նախագծերի իրականացումը*

Ուսումնական նախագծերն իրականացվում են 7-12-րդ դասարաններում: Նախագիծն առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որեւէ ուսումնական առարկայի կամ ուսումնասիրվող որեւէ օբյեկտի կամ երեւույթի վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանք է՝ նվիրված օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտմանը, արդյունքների ստացման եւ եզրակացությունների արձանագրմանը: Սովորողի կողմից նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից՝ հետազոտության մեթոդների համադրմամբ, միեւնույն օբյեկտի եւ երեւույթի, օրինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների հավաքման, համադրման, վերլուծության շրջանակում: Նախագծի թեման կարող է լինել առարկայի(ների) շրջանակում հետազոտություն, մշակութային, ազգագրական միջոցառում, համայնքի խնդիրներին նվիրված աշխատանք:

Հաստատությունն ուսումնական պլանի դպրոցական (ընտրովի) բաղադրիչից նախագծի իրականացման համար սահմանված կարգով տրամադրում է համապատասխան ժամաքանակ, որը տարիֆիկացվում է: Միջառարկայական նախագծի դեպքում տարիֆիկացվում են մասնակցող բոլոր առարկաների ուսուցիչներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տեւողությանը համապատասխան: Սովորողներն իրենք են ընտրում այն նախագիծը, որին ցանկանում են մասնակցել: Նրանք կարող են չմասնակցել դրա աշխատանքներին, առանց պատճառ ներկայացնելու: Նախագիծն ավարտելուց հետո սովորողն այն պաշտպանում է նախագծի ուսուցչի մոտ, իսկ միջառարկայական նախագծերի դեպքում՝ համապատասխան առարկաների ուսուցիչների հանձնաժողովի մոտ: Սովորողների կողմից իրականացված ավարտուն նախագծերը գնահատվում են եւ հրապարակվում դպրոցի կայքում:

*Ն. Հ.*

ԼՈՒՐԵՐ

## ԿՀԱՏԿԱՑՎԻ 298,6 ՄԼՐԴ ԴՐԱՄ

Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքի նախարարությանը 2023թ. կհատկացվի մոտ 298,6 մլրդ դրամ: Այս մասին Ազգային ժողովում խորհրդարանական մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2023թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ՝ նոյեմբերի 7-ին, ասել է հանրապետության ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը: 2022թ. գերատեսչությանը տրամադրվել էր 268 մլրդ 300 մլն դրամ: «2021թ. հատկացվել էր 201 մլրդ 370 մլն դրամ»,- տեղեկացրել է Խաչատրյանը: Շրջակա միջավայրի նախարարությանը 2023թ. նախատեսում են հատկացնել 8 մլրդ 142 մլն դրամ: 2022թ. գերատեսչությանը հատկացվել էր 8 մլրդ 353 մլն դրան այն դեպքում, երբ 2021թ. 7 մլրդ 213 մլն դրամ էր հատկացվել:

## ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՅՑԵՐ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները վերահսկողական ստուգայցերի ընթացքում՝ նոյեմբերի 3-ին, Կոտայքի մարզում արձանագրել են սեւահողի ապօրինի տեղափոխման 2 դեպք: Ջրաղբյուր համայնքի վարչական տարածքում տեսուչները, ստուգման ենթարկելով քաղաքացիներ Գ.Ղ-ի եւ Գ.Մ-ի վարած «Կամազ» մակնիշի բեռնատար ավտոմեքենաները, հայտնաբերել են 16խմ սեւահող: Հողի բերրի շերտի անօրինական տեղափոխման համար իրավախախտները ենթարկվել են վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամի չափով, նաեւ ներկայացվել է շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման պահանջ՝160.000 ՀՀ դրամ: Խեւահողն առգրավվել եւ հանձնվել է Կոտայքի մարզի Աբովյան համայնքին:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը 2023թ. կշարունակի իրականացնել տարբեր տեսակի գյուղատնտեսական ծրագրեր: Այդ նպատակների համար նախատեսվում է հատկացնել 37 մլրդ 935 մլն դրամ: Այս մասին Ազգային ժողովում խորհրդարանական մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2023թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ՝նոյեմբերի 7-ին, ասել է հանրապետության ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը: Նախարարը նշել է, որ 2022թ. այդ նպատակների համար հատկացվել է 31 մլրդ 905 մլն դրամ: «2021թ. փաստացի ֆինանսավորումը կազմել է 24 մլրդ 170 մլն դրամ»,- տեղեկացրել է Խաչատրյանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 49 ՃՏՊ. 5 մարդ զոհվել է, 71-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (3)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՅ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Արաբկիր, Բաբայան փողոց, 11/1 հասցեում գտնվող 20,96 ք.մ. ինքնակամ շինություններ եւ 0,07 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 318400000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.11.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՅ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., 1-ին փողոց, 14 հասցեում գտնվող 130,4 ք.մ. բնակելի տուն, 18,3 ք.մ. անասնաշենք, 4,5 ք.մ. անասնաշենք, 19,5 ք.մ. ծածկ եւ 0,057 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15950000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Այգեստան թաղամաս, 249 հասցեում գտնվող 81,2 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0,168 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա, 59/27 հասցեում գտնվող 170,6 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0,00982 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 42000000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Աբովյան փողոց, 71 հասցեում գտնվող 164.9 ք.մ. բնակելի տուն, 15.3 ք.մ. մառան, 9.3 ք.մ. թոնրատուն, 6.5 ք.մ. բաղնիք, 34.6 ք.մ. ծածկ, 42.5 ք.մ. ինքնակամ կառուցված գոմ, 6.5 ք.մ. ինքնակամ կառուցված լողավազան եւ 0.11852 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17040000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Չարենցի փողոց, 16-1 հասցեում գտնվող 151,15 ք.մ. բնակելի տուն, 6,99 ք.մ. մառան, 5,92 ք.մ. թռչնանոց, 50,39 ք.մ. ավտոտնակ եւ 0,05205 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ջուղայի փողոց, 7/4 հասցեում գտնվող 198.8 ք.մ. մակերեսով ավտոտեխսպասարկման կայան եւ 0.012597 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 67560000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Կոմինտերնի փողոց, 1-ին նրբանցք, 8 հասցեում գտնվող 283,86 ք.մ. բնակելի տուն եւ 0,032894 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 29440000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Գողթ, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող 354,26 ք.մ. բնակելի տուն, 68,75 ք.մ. անասնաշենք, 5,15 ք.մ. կաթսայատուն, 35,08 ք.մ. թոնրատուն, ծածկ, 11,33 ք.մ. հարթակ եւ 0,38747 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33000000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Երկրաբանների փողոց, 1 հասցեում գտնվող 33,5 ք?մ? բնակելի տուն, 1 ք.մ. /0,8 խ.մ./ պարիսպ եւ 0,0614 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4900000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Կոշտոյան փողոց, 5/1 շենք, 30 հասցեում գտնվող 83,58 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Աէրացիայի փողոց, 4 շենք, 17 հասցեում գտնվող 65,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22120000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոց, 4ա շենք, 39 հասցեում գտնվող 50,4 ք.մ. բնակարան եւ 1,8 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 24060000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., 4-րդ միկրոշրջան, 57 շենք, թիվ 20 հասցեում գտնվող 74.16 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 32 շենք, 26 հասցեում գտնվող 60,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13850000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք., Կամոյի փողոց, 6-րդ փակուղի, 1 հասցեում գտնվող 159,9 ք.մ. բնակելի տուն, 43,6 ք.մ. հացատուն, 16,8 ք.մ. խորդանոց եւ 0,1161 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 24 շենք, 26 հասցեում գտնվող 91,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 37200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Նարեկացու փողոց, 15/2 հասցեում գտնվող 43,76 ք.մ. տնտեսական շինություն եւ 0,0052 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12100000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Սպանդարյան փողոց, 44 հասցեում գտնվող 264 ք.մ. բնակելի տուն, 23,5 ք.մ. անասնաշենք, 12,6 ք.մ. հացատուն, 6,89 ք.մ. հենապատ եւ 0,0651 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18350000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, գյուղ Բջնի, 2-րդ փողոց, 67 հասցեում գտնվող 210,93 ք.մ. բնակելի տուն, 66,4 ք.մ. անասնաշենք եւ 0,533 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք. 8-րդ թաղամաս, 14ա շենք, 36 հասցեում գտնվող 66,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 15 շենք, 3 հասցեում գտնվող 51,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 3400000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Շահումյան փողոց, 26 հասցեում գտնվող 228,78 ք.մ. բնակելի տուն, 5,77 ք.մ. կաթսայատուն, 230,62 ք.մ. օժանդակ շինություն, 15,48 ք.մ. /38,7 խ.մ./ պարիսպ եւ 0,1107 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 34360000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Փյունիկ թաղամաս, 20 հասցեում գտնվող 75,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,067 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 6800000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Սյունիքի փողոց, 177 հասցեում գտնվող 431 ք.մ. բնակելի տուն, 10,9 ք.մ. /12 խ.մ./ պարիսպ եւ 0,0616 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30600000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք., Վ. Պետրոսյան փողոց, 1 շենք, 12 հասցեում գտնվող 78,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20730000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք?, Տիգրան Մեծի փողոց, 18 շենք, 6 հասցեում գտնվող 63,52 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16740000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Ղարագյոզյան փողոց, 69 հասցեում գտնվող 196,72 ք.մ. բնակելի տուն, 23,45 ք.մ. հացատուն, 73,56 ք.մ. անասնաշենք եւ 0,09806 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Հովհաննիսյան փողոց, 31 հասցեում գտնվող 75,1 ք.մ. բնակելի տուն, 40 ք.մ. անասնաշենք, 32,1 ք.մ. խարխուլ, 37 ք.մ. մառան, 14,8 ք.մ. սանհանգույց, 12,2 ք.մ. /24,4 խ.մ./ պարիսպ եւ 0.136 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 4-րդ թաղամաս, 11 շենք, 41 հասցեում գտնվող 67 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14990000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 2 շենք, 1 հասցեում գտնվող 90,7 ք.մ. բնակարան եւ 11,2 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 28440000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 83 շենք, 19 հասցեում գտնվող 34,68 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 3900000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Մուրացանի փողոց, 37 հասցեում գտնվող 49,5 ք.մ. բնակելի տուն, 3,1 ք.մ./6,2 խ.մ / պարիսպ եւ 0,01179 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Արարատյան 1-ին զանգված, 16 շենք, 14 հասցեում գտնվող 62,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25800000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Վ. Տերյան փողոց, 1-ին նրբանցք, 7/1 հասցեում գտնվող 112,64 ք.մ. բնակելի տուն եւ 0,08942 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10070000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ա.Բաբաջանյան փողոց, 53 շենք, 17 հասցեում գտնվող 112,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33200000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց, 3 շենք, 14 հասցեում գտնվող 56 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11950000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 50/1 շենք, 21 հասցեում գտնվող 86,92 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Ս. Ավետիսյան փողոց, 19/1 շենք, 20 հասցեում գտնվող 45,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Հովտաշատ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, 1 հասցեում գտնվող 206,2 ք?մ? բնակելի տուն, 2,3 ք.մ. կաթսայատուն, 19,8 ք.մ. անասնաշենք, 13,65 ք.մ. անասնաշենք, 20,35 ք.մ. անասնաշենք, 3,23 ք.մ. թռչնանոց, 28 ք.մ. ծածկ, 8,8 ք.մ. ծածկ, 3,42 ք.մ. ծածկ եւ 0,207 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20100000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., 8-րդ փողոց, 88 հասցեում գտնվող 87,7 ք.մ. բնակելի տուն, 27,2 ք.մ. ավտոտնակ, 7,3 ք.մ. խոհանոց, 7,9 ք.մ. լողարան, 35,2 ք.մ. ծածկ եւ 0,0967 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21700000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք., Գ. Լուսավորչի փողոց, 32 հասցեում գտնվող 235,6 ք.մ. բնակելի տուն, 6,8 ք.մ. թռչնանոց, 17,7 ք.մ. ծածկ, 2 ք.մ. /3,6 խ.մ./ պարիսպ եւ 0,07272 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35030000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նուբարաշեն, Նուբարաշեն Գ-6 թաղամաս, 15 հասցեում գտնվող 147,5 ք.մ. բնակելի տուն եւ 0,04 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 36860000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Ճ. Ազնավուրի փողոց, 63 հասցեում գտնվող 170,1 ք.մ. բնակելի տուն, 2,9 ք?մ? /7,54 խ.մ./ պարիսպ, 2,4 ք.մ., /4,8 խ.մ./ պարիսպ եւ 0,069 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35200000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ախուրյան խճուղի, 2ա շենք, 133 հասցեում գտնվող 64,14 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13320000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Միքայելյան փողոց, 2/2 հասցեում գտնվող 96,95 ք.մ. բնակարան /գույքի կազմում առկա է 30,52 ք.մ. մակերեսով հասարակական նշանակության առեւտրի սրահ/: Լոտի մեկնարկային գինը՝ 19100000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Կարբի, 2-րդ փողոց, 13 հասցեում գտնվող 220,3 ք.մ. բնակելի տուն, 12,5 ք.մ. անասնաշենք, 5,7 ք.մ. հնոց, 12,5 ք.մ. թոնրատուն, 29,3 ք.մ. տնտեսական պահեստ, 5,9 ք.մ. սանհանգույց, 32,1 ք.մ. ծածկ եւ 0,15 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 32800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Ջվարթնոց թաղամաս, 15 շենք, 50 հասցեում գտնվող 43 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11120000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի, Վեդի ք., Արարատյան փողոց, 59/13 հասցեում գտնվող 48,1 ք.մ. առեւտրի սրահ, 7,4 ք.մ. ծածկ եւ 0,00865 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20100000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.11.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 16.12.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՅ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Ֆ. Նանսենի փողոց, 2 շենք, 13 հասցեում գտնվող 91,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 39330000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Մ. Բաղրամյան փողոց, 46 շենք, 2 հասցեում գտնվող 91,83 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12260000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Երեւանյան փողոց, 90 հասցեում գտնվող 556,4 ք.մ. բնակելի տան, 44,5 ք.մ. ինքնակամ շինությունների եւ 0,103 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 46300000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.11.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.12.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՆՈՐ ԿՅԱՆՔ

# «ԱՎՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

**Արդեն մի քանի օր է, ինչ հանդիսատեսը կարող է կինոթատրոններում դիտել ռեժիսոր Իննա Սահակյանի «Ավրորայի լուսաբացը» ֆիլմը: Չնայած պաշտոնական պրեմիերան կայացել էր «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում, սահմանափակ թվով հանդիսատես էր ֆիլմը դիտել:**



Նոյեմբերի 3-ից «Ավրորայի լուսաբացը» պաշտոնապես էկրաններ է բարձրացել: Ուղիղ երկու շաբաթ ֆիլմը կլինի էկրաններին:

«Ավրորայի լուսաբացը» ֆիլմի հիմքում Արշալույս Մարտիկյանի (նույն ինքը՝ Ավրորա Մարտիկանյան) պատմությունն է: 14-ամյա դեռատի աղջիկը հայտնվում է Եղեռնի սարսափելի ոճրագործությունների թիրախում, ականատես է լինում իր ամբողջ ընտանիքի սպանությանը, բռնում գաղթի ճամփան, հայտնվում թուրքական հարեմի գերության մեջ եւ անցնում անասելի արհավիրքներով:

Իր կամքի ուժի, խելամտության եւ անդրդվելի վճռականության շնորհիվ նրան հաջողվում է ողջ մնալ եւ 1917թ-ին Զորավար Անդրանիկի եւ «Մերձավոր Արեւելքում ամերիկյան օգնության կոմիտե»-ի օգնությամբ փրկություն գտնել ԱՄՆ-ում: Այնտեղ նրա կյանքի իրական պատմության հիման վրա հրատարակվում է «Հոշոտված Հայաստան» գիրքը, որը մեծ ճանաչում է ձեռք բերում, իսկ 1919 թ.-ին Արշալույսը հերոսաբար համաձայնում է իր կյանքի դաժան փորձությունների մասին պատմող հոլիվուդյան «Հոգիների աճուրդ» համր ֆիլմում ինքն իրեն մարմնավորել:

Ֆիլմի հիմքում Արշալույս Մարտիկյանի վավերագական արխիվային հարցազրույցներն են, որոնք ոչ միայն հնարավորություն են տալիս հանդիսատեսին տեսնել դաժան իրադարձությունների միջով անցած մարդու էությունը, այլեւ զգալ նրա ցավը, հիանալ նրա կամքի ուժով, տոկունությամբ, հավատով, դաժանության մեջ գեղեցիկը տեսնելու ու հիշելու նրա կարողությամբ:

«Ավրորայի լուսաբացը» ֆիլմի հիմնական նպատակն է խոսել Հայոց ցեղասպանության մասին միջազգային հանրությանը հասանելի լեզվով, միեւնույն ժամանակ ներկայացնել մեր ազգի պատմության ամենածանր ու ցավոտ թեման հաղթական տեսակետից:

Հայ կինոյի պատմության մեջ առաջին հայկական լիամետրաժ վավերագրական ֆիլմն է, որի պատմողական կառուցվածքը անիմացիան է: Այն պատկերում է նկարագրվող իրադարձությունը, հաղորդում տրամադրությունը եւ շաղկապում դեպքերի հաջորդականությունը:

Ֆիլմի անիմացիոն մասը համատեղ իրականացրել են հայ եւ լիտվացի նկարիչ-անիմատորները: Ֆիլմում օգտագործված է գերմանացի կոմպոզիտորի կողմից հենց ֆիլմի համար գրված երաժշտություն, որը կատարել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը եւ Պրագայի ֆիլհարմոնիկ նվագախումբը:

Ֆիլմը Հայաստանի ազգային կինոակադեմիայի կողմից ընտրվել է ներկայացվելու համար «Օսկար»-ի 95-րդ մրցանակաբաշխության «լավագույն արտասահմանյան ֆիլմ» անվանակարգում:

«Ավրորայի լուսաբացը» ֆիլմի սցենարի հեղինակներն են ռեժիսոր Իննա Սահակյանը, Կերստին Մեյեր-Բիցը եւ Պիտեր Լյախովը: Պրոդյուսերներն են Քրիստիան Բիցը, Յուստե Միխայլինայտեն, Կեստուտիս Դռազգաուսկասը, Էրիկ Իսրաելյանը եւ Իննա Սահակյանը, կոմպոզիտորները Քրիստինե Աֆդերիարը, Անդրանիկ Բերբերյանը եւ Գարեգին Առաքելյանն են:

Ֆիլմը էկրաններին կլինի մինչեւ նոյեմբերի 17-ը: ֆիլմը ստեղծվել է Զորյան ինստիտուտի ակադեմիական ներդրման շնորհիվ. դրա հիմքում ինստիտուտի «Բանավոր պատմության» արխիվն է:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ

# «ՄԿՈՆ ԻՆՁԱՆԻՑ ՆԵՂԱՑԵԼ ԷՐ»

***Համացանցում նոր սկանդալ է հասունացել դերասան Մկրտիչ Արզումանյանի շուրջ:***

Բանն այն է, որ բլոգեր, դերասանուհի Անյա Խասկին արդեն մի քանի օր է, ինչ համացանցի իր էջում ակտիվորեն տարածում եւ դատապարտում է մի տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես է Գյումրիում հայտնի ֆայտոնի ձին ուժասպառ եղել եւ արնաքամ վիճակում չի կարողանում քայլել:




Բացի այն, որ դերասանուհին նման սահմռկեցուցիչ տեսարանի վրա հրավիրել էր Հայաստանի պատկան մարմիններին ուշադրությունը, նաեւ անդրադարձել էր սիրված եւ հայտնի դերասան Մկրտիչ Արզումանյանին:




*Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՄԱԼՐՈՒՄ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Կամերային թատրոնի սիրված դերասան Մխիթար Ավետիսյանի ընտանիքում համալրում է եղել: Դերասանը ունեցել է զավակ, որին անվանել է Ստեփան: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ դերասանի սոցցանցային պաշտոնական էջից:

Հիշեցնենք, որ ավելի վաղ դերասանն ու կինը դստեր հետ հայկական տարազով ավանդական գեղեցիկ ֆոտոշարք էին ներկայացրել:

Լիդա Եգիազարյան

## ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն վնասվածք է ստացել:

«Լորիանի» դեմ Ֆրանսիայի առաջնության 14-րդ տուրի հանդիպման 85-րդ րոպեին 23-ամյա ֆուտբոլիստը փոխարինվել էր: Նա մկանային վնասվածք է ստացել: Բուժզննումը ցույց կտա վնասվածքի ծանրությունն ու ապաքինման ժամկետը: ՊՍԺ-ն «Լորիանին» հաղթել էր 2:1 հաշվով:

Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն ՊՍԺ-ի հետ մասնակցել է 19 հանդիպման բոլոր մրցաշարերում, խփել 18 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում:

Ամենացածր գնահատականը

«Մանչեսթեր Յունայթեդի» 37-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն ամենացածր գնահատականն է (3) ստացել «Աստոն Վիլայի» դեմ Անգլիայի առաջնության 15-րդ տուրի խաղում: 3 գնահատականն են ստացել նաեւ պաշտպան Վիկտոր Լինդելյոֆն ու կիսապաշտպան Դոնի վան դե Բեկը: «Մանչեսթեր Յունայթեդը» պարտվել էր 1:3 հաշվով:

10 հնարավորից 5 գնահատականն են ստացել Դավիդ Դե Խեան, Դիոգու Դալոտը, Լյուկ Շոուն, Կազեմիրոն, Կրիստիան Էրիկսենը, Տիրել Մալասիան, Էնտոնի Էլանգան եւ Անտոնի Մարտիալը:

4 են ստացել Մարկուս Ռեշֆորդը, 6 են ստացել Լիսանդրո Մարտինեսն ու Ալեխանդրո Գարնաչոն:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ

Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան հրապարակել է ամենշաբաթյա վարկանիշային աղյուսակը:

Փարիզի «Մասթերսի» եզրափակիչում սերբ Նովակ Ջոկովիչին հաղթած 19-ամյա դանիացի Հոլգեր Ռունեն առաջին անգամ լավագույն տասնյակում է: Նա 18-ից բարձրացել է 10-րդ տեղ: Լավագույն եռյակ է վերադարձել Փարիզում կիսաեզրափակիչ հասած հույն Ստեֆանոս Ցիցիպասը: Կանադացի Ֆելիքս Օժե-Ալյասիմը բարելավել է անձնական ռեկորդը եւ 6-րդն է:

Գերմանիայի ներկայացուցիչ Ալեքսանդր Զվերեւը 2015 թվականից հետո առաջին անգամ դուրս է մնացել տասնյակից: Նա 12-րդն է: Ռուսաստանցի Կարեն Խաչանովը 19-ից նախանշել է 20-րդ տեղ:

*● Նոյեմբերի 9-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Պեպո» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ո՞ր թույլտվության համար դիմել Շրջակա միջավայրի նախարարություն:**

*Հասմիկ Թադեւոսյան (30 տարկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Թույլտվություններ՝
- Ջրօգտագործման դեպքում,
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առեւտրի մասին» կոնվենցիայով (ՍԻԹԵՍ) կարգավորման ենթակա վայրի կենդանիները եւ բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում,
- բուսաբանական հավաքածուներ եւ առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում,
- Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիներ եւ կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում,
- անազատ պայմաններում բուծված թառափազգիների տեսակների նմուշների արտահանման դեպքում:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Լիցենզիաներ՝
- ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ առեւտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների ներմուծման եւ արտահանման դեպքում,
- վտանգավոր թափոնների գործածության գործունեության դեպքում,
- թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի՝ ԵԱՏՄ տարածք ներմուծման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,
- օզոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների՝ ԵԱՏՄ տարածք ներմուծման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,
- վայրի կենդանիների եւ առանձին վայրի բույսերի՝ ԵԱՏՄ տարածքով տեղափոխման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,
- Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ եւ անհետացող վայրի կենդանիների եւ բույսերի տեսակների ու դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ գրավոր տարբերակով դիմումի ներկայացման համար:**

*Լուիզա Կիրակոսյան (27 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու, իրավաբանական անձի գրավոր դիմումը, բողոքը եւ առաջարկությունը պետք է ստորագրված լինի՝նշելով դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն: Առանց հիշյալ տեղեկությունների առաջարկությունը, դիմումը, բողոքը համարվում է անստորագիր, չի քննարկվում եւ սահմանված կարգով ոչնչացվում է:

*ՀՀ ազգային անվտանգության ծառայություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Քաղաքացու, իրավաբանական անձի՝էլեկտրոնային տարբերակով հղված դիմումի, բողոքի եւ առաջարկության վրա պետք է լինի էլեկտրոնային ստորագրություն՝նշելով դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն: Առանց հիշյալ տեղեկությունների առաջարկությունը, դիմումը, բողոքը համարվում է անստորագիր, չի քննարկվում եւ սահմանված կարգով ոչնչացվում է:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Անգլիայի Լիվերպուլ քաղաքում ընթացող սպորտային մարմնամարզության աշխարհի առաջնությունում Տոկիոյի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի չեմպիոն, 2022 թվականի Եվրոպայի փոխչեմպիոն, Եվրոպական խաղերի չեմպիոն, աշխարհի գավաթակիր Արթուր Դավթյանը դարձավ Աշխարհի չեմպիոն:

Դավթյանը15.050 միավորով շրջանցեց բոլոր մրցակիցներին՝ դառնալով անկախ Հայաստանի առաջին աշխարհի չեմպիոնը սպորտային մարմնամարզությունում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:




*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: